նիս այժմ յինէն, խնդրէ՛ : Եւ նա ասաց. Ունիմ ասա եղբօրորդի մի, որ կամի Ղուկասչէրիֆն գնալ : Եւ նա ասէ. Ով ուսդա, չէ թէ մի, ապա տասն ալ թէ լինի՝ քո խաթերն համար կ՚առնում, հետ տանիմ. բեր գնա առ իս, զի տեսեալ ճանաչիցեմ զնա : Եւ օր մի տարաւ զիս առ նա. եւ անկեալ յոտսն՝ պագի զծունկն : Եհարց եթէ Դա՞ է քո ասածն. եւ նա ասէ. Այոյ : Եւ պատվիրեց ինձ զի մինչ մերձ չատրրի նորա իջնում. այլ եւ հրամեց քէհեային, որ զիս լաւ հայի եւ չտայ զաֆար առնուլ յինէն :

Եւ իբրեւ եղեւ օրն չուելոյ խաղնին՝ վաչան ինքն իւր ազամաթոմն եւ հեծելոմն մինչ ի զուրս միլ մի զաւորեց : Եւ ԴՃ մարդ ունէր խաղնան, ամէն պահատուր եւ ազնաւուր, տօնանմիչ, խուչանմիչ եղած. եւ ութսուն զօրեղ եւ քաջ մեծ ջորի եւ պէտավի, ամէնից գլուխն խումաչ ձգած, որպէս քարվան պաչի խաթրնուն. եւ ամէն մէկ ենկիչէրու մի յափ տուած. նոցա վրայ բարձած էր խաղնան. եւ զկնի էչքէրն երթայր. ապա հուսկ յետոյ մեք ուխտաւորքս, որ կայաք հարիւր հոգի. եւ նախընթաց երթայր օթախն եւ տեղ պատրաստէր. եւ երբ մերձենայր խաղնան օթախն չարեկ միլ մի՝ զարդարէին զչորիքն եւ հարկանէին պուղիք եւ նաղարայք, տապլայք, տաւուլ զուռնայք եւ ազգի ազգի քնարք եւ երգ. յառաջ խումիչ լինէր ազային

14 ոտսն : — 15 դայ : — 18 չտա : — 21 յիւր :